ՆՈՐ-ԴԱՐ

№ 28 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 16 փետրուարի 1899 Երեքշաբթի, 16 փետրուարի ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 28

Ցարևկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Ադմանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Ցայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Ցայտարարութիւնների բառին՝ 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ

Ուրբաթ, փետրուարի 12 ին ի տէր հանգեաւ

ՍԱԼՈՄԷ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆՑԸ

որոյ մասին հանգուցեալ որդիքը՝ քժ. Յարութիւն Յովհաննիսեան, Գրիգոր Յովհաննիսեան Վարդանեանցները, Մարիա Յովհաննիսեան և իւրը Նոնէ Աղէքսանդրեան Ազամազեանցները յայտնում են իրենց ազգականներին և ծանօթներին։ Թաղման հանդէսը տեղի կունենայ երեքշաբթի՝ փետր. 16-ին առաւօտեան ժամը 10 ին սեպհական տանից՝ Դէորգեան հրապարակ, դէպի Մօղնուց սուրբ Դէորգի եկեղեցին։ (№ 16) 1—1

Գայեանէ Բարսեղեան Շահինեանց որդւոց հետ յայտնում է ի պիտութիւն բարեկամաց և ծանօթներին իւր սիրելի որդւոյ՝

ՄԿՐՏԻՉ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՇԱՀԻՆԵԱՆՑԻ

վաղահաս մահը, խնդրում է չնորհ բերել յուղարկաւորութեանը դէպի Վանայ եկեղեցին երեքշաբթի, փետրուարի 16 ին առաւօտեան 10 ժամին իւր բնակարանից՝ որ գտնւում է Մուխրանեան փողոցի վրայ, Մուխրանսկու տուն. բնակարան №5։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Ա ա ջ ն ո ր դ ո ղ.—Թոշակներ ստանալու հիւանդութիւնը վարակիչ է։

Ք ր ո ն ի կ ո ն.—Լուրեր։

Մեզ գրում են Բագուից, Սալմաստից, Ալէքսանդրապոլից։

Նշանագրութիւնը ազգկայ, թէ ոգայի ծիսական քահանան պէտք է կատարէ։

Աւազակութեան պատճառները։

Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը։

Հայոց Ներկայացում Թիֆլիսում։

Մամուլի չորջը։

Թղթակցութիւններ.—Մարգ։ Քաղաքական—Ֆրանսիա։ Բալգարիա։ Աւստրիա։

Հեռագրներ։

Տեղեկատու։

Ցայտարարութիւններ.

Թիֆլիս, 15 փետրուարի, 1899 թ.

ԹՈՂՉԿՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ ՎԱՐԱԿԻՉ Է

—

Քաղաքակրթ տէրութեան մէջ իրրև պաշտօնեաներ, իրրև աստիճանաւորներ, իրրև զինուորականներ որոշ տարիներ անարատ ծառայելուց յետոյ ստանում են որոշ չափով կենսաթոշակ տէրութեան գանձարանից։ Նոյնպէս ստանում են և պետութեան մէջ դոյութիւն ունեցող սյլ և այլ հանրօգուտ հաստատութիւնների մէջ ծառայողները որոշ տարիներ անբիծ և արդիւնաւոր պաշտօնավարութիւնից յետոյ։

Կենսաթոշակ նշանակելու սկզբունքը արդար գործ է, որովհետև մարդս իւր երիտասարդ հասակից իւր ոյժերը նուիրելով պետութեան, այլ և հասարակութեան և նրա օգտին դոյութիւն ունեցող հաստատութիւններին, հասկանալի և բնական է, որ նոյն այդ հաստատութիւնները, ինչպէս և տէրութիւնը, ապահովեն այդ ծառայողի գոյութիւնը, երբ նրա ոյժերը սպառուել են՝ երբ նա ծերացել է, այլևս չի կարող աշխատել և հոգալ իւր ապրուստը։

Այնուհետև կենսաթոշակ նշանակելու սկզբունքը և այն լաւ կողմն ունի, որ մարդկանց մէջ վառում է հասարակութեանը, ընդհանրութեանը, տէրութեանը և այլն հաւատարմութեամբ ծառայելու եռանդը։

Մեր մէջ էլ կենսաթոշակ նշանակելու միտքը հաստատուել է և պէտքը զգալի է դարձել։

Մինչև անգամ կան մեր մէջ աշխատաւոր մարդիկ, որոնք, կարելի է ասել, պատահմամբ կենսաթոշակ են ստանում։

Մեր մէջ կենսաթոշակ ստացողներն պէտք է լինեն իսկապէս գոնէ առ այժմ միջոցներից զուրկ, նիւթականապէս անապահով մեր հայոց հաստատութիւնների մէջ որոշ տարիներ ծառայողները (տասուչ, ուսուցիչ, վերակացու, ծառայ), զրաղարանապետ, քարտուղար և գրողները (բանաստեղծ, վիպասան, քարոզիչ), և մամուլին ծառայողները — (հրապարակախօս, խմբագիրը, աշխատակից, գրաշար)։

Քահանաներին և առ հասարակ հոգևորականներին (վարդապետ, սարկաւագ, տիրացու, երգիչ) հաշուի չենք առնում, քանի որ դրանց մասին պէտք է հոգան եկեղեցիները, վանքերը, էջմիածինը։

Կենսաթոշակ տալու միտքը մեր մէջ հաստատացած լինելով, մինչև անգամ կան գրողներ այս և այն հաստատութիւնից կենսաթոշակ են ստանում արդէն։

Այդ բանին մենք ոչ միայն դէմ չենք, այլ և մեր գոհունակութիւնն ենք յայտնում, որ այդպիսի օգտաւէտ միտք սկսել է իրագործուել։

Միայն մի բանի մենք դէմ ենք, որ կենսաթոշակ տալը մեր մէջ, ինչպէս որ շատ բան, պատահական է և հիմք չունի։

Այդ է պատճառը երևի, որ այժմս ով որ մի որ և է հաստատութեան մէջ ծառայել է արդէն՝ ինքըն է խնդիրը տալիս և սպասում, որ իրեն թոշակ նշանակեն։ Թէ ինչ հիմանց վրայ, քանի տարի է ծառայել, ինչպէս է ծառայել և որ գումարներից որ օրէնքով և որ որոշումով պէտք է այդ խնդրատուին թոշակ նշանակել—այդ էական խնդիրները խնդրատուին չեն հետաքրքրում, նա միայն թոշակ ստանալ է ուզում ի նկատի առնելով մի ուրիշի օրինակը, որ այդ ճանապարհով հասել է իրեն ցանկալի նպատակին։

Բանն այն է, որ մեր և ոչ մի հաստատութեան մէջ չկայ մի առանձին գումար կենսաթոշակների յատկացրած և կենսաթոշակ չնորհելու մասին էլ ոչ մի կանոնադրութիւն չկայ. ոչ մի հաստատութիւն չունի մի կանոնադրութիւն այդ մասին թէ ով և քանի տարի և ինչպիսի ծառայութիւնից յետոյ կարող է ստանալ, կենսաթոշակ և այն ինչ չափով և որպիսի պայմանով։

Այսպէս մեր մէջ առաջ կենսաթոշակ *խնդրող* մարդն է լոյս ընկնում և յետոյ հաստատութիւնը, եկեղեցին, գումարն են որոնում և—կենսաթոշակ նշանակում։

Դա անկարգ և ապօրինի գործ է և հետևանքն այն կլինի, որ ամենքն էլ կենսաթոշակ կըպահանջեն և անարդարութիւնը և խառնիճաղանջութիւնը ազատ դործելու ընդարձակ ասպարէզ կըգտնեն։

Չենք հասկանում թէ էջմիածինը, Սինոդը, Ներսիսեան դըպրանոցը, կամ մի այլ հաստատութիւն ինչ իրաւունքով կարող են եկեղեցուն, հոգևոր դպրանոցին կամ որոշ հաստատութեան պատկանեալ գումարից կենսաթոշակներ բաժանելու թէկուզ հէնց ամենաարժանաւոր և միջոցներից զուրկ գործչի, ուսուցչի, գրողի, հրապարակախօսի, քահանայի կամ մի այլ պաշտօնեայի։

Այդպիսով նախ հաստատութիւնները և դրանց պահպանող ժողովուրդը իրաւունքից զուրս գործելու է վարժւում և երկրորդ՝ ամեն բան անկման է մատնւում։

Կենսաթոշակներ կապել, որոշ թիւ տարիներ անբիծ և հաւատարիմ ծառայողին—ինչպէս և անապահով զրողներին, մենք դէմ չենք, բայց նախ պէտք է այդ բանի համար հարկաւոր գումարը կազմել և որոշ կանոնադրութիւն հրատարակել։

Այլապէս բարի գործ անելու ժամանակ՝ կարող ենք մենք չարը գործած լինել.

Փետրուարի 1 ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են՝ 9 րուբլի։ Տարեկան բաժանորդագինը՝ 10 րուբլի է. Նոր բաժանորդ գրւողը կարող է ստանալ «Նոր-Դար»-ը անցեալ յունուարի 1-ից։

ՔՐՈՆԻԿՈՆ

Վեհափառ կաթողիկոսը այսօր, փետր. 16 ին, առաւօտեան ժամը 11-ին բարեհաճելու է այց գնալու Ներսիսեան հոգևոր դպրանոցը։

—

Փետր. 14-ին Վանքի աւագ եկեղեցում հանգուցեալ Ներսէս Ե կաթողիկոսի յիշատակին կատարուեց հոգեհանգիստ մահուան տարեդարձի օրը և այնուհետև յիշեալ դպրանոցի բակում տեղի ունեցաւ տարեկան և սովորական հանդէսը և մատուցուեց դպրոցական տնտեսական և ուսումնական տարեկան հաշիւը։

Ներկայ էր հանդիսին թեմիս գեր. Առաջնորդը. հանդէսն անցաւ անգոյն և ոչ մի տպաւորութիւն չրթողեց։ Միայն մի հոգաբարձու գովից իւր և իւր ընկերների գործունէութիւնը։ Այս առթիւ հարկ ենք համարում նկատելու, որ այդ հոգաբարձուների ժամանակամիջոցը վաղուց անցել է։ Նոր ընտրութիւն չըլինելով, կարծում ենք, որ աւելի օրինական է, երբ հոգևոր իշխանութիւնն է կառավարում դպրանոցը, քան նրանք, որոնք ոչ մի իրաւունք չունին ոչ ուսումի և ոչ էլ տնտեսականի վերաբերութեամբ մի որև է կարգադրութիւն անելու։

—

Վեհափառ Կաթողիկոսը ի պատասխանի իւր Պարսկաստան ուղարկած առաջնորդի ձեռքով Շահին մատուցած զրուխթեան, ստացել է պարսկերէն լեզուով գրած արքայական չնորհակալութեան մի նամակ իրեն Շահի կողմից։

—

Թիֆլիսի առաջ ս. Նունէի տուում նարանում հայոց լեզուի ուսուցչի առաջիկը աւելացրել են. առաջ 10 րուբլի էր, այժմս պիտի ստանայ 20 ր.։

—

Մեծ և ընտիր բազմութեան ուղեկցութեամբ պատարագից յետոյ հոգին յանձնուեց Նապոլէոն Ամատունու մարմինը։ Զանազան հաստատութիւններից և բարեկամներից հանդուցեալի դագաղի վրայ պսակներ էին դրուած։

—

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են որ լուսաւորութեան մինիստրութեան մէջ ուշադրութեան է առնուած հանրակրթական կուրսերի կազմակերպութեան հարցը։ Այդ կուրսերում պիտի սովորեն այն անձինք, որոնք հնարաւորութիւն չունեն իրենց կրթութիւնը ստանալու դպրոցական հիմարկութիւններում և կամ նրանք, որոնք կցանկան լրացնել իրենց ստացած կրթութիւնը։

Կուրսերի համար մշակուած են յատուկ կանոններ, որոնք այժմ ուղարկուած են դպրոցական հիմնարկութիւնների չրջանների հոգաբարձութիւններին։

Կուրսերի կամ ժողովրդական համալսարանների համար մշակուած օրէնքները կըհաստատուին, երբ կըստացուի Պետերբուրգի մանկավարժական խորհրդի փոխադարձ օգնութեան համաձայնութիւնը։

—

Նոյն լրագրները հաղորդում են նոյնպէս, որ երկրագործութեան և պետական կալուածների մինիստրը համաձայնութիւն է տուել հիւսիսային Ռուսիայի հանքային վարչութեան այն միջնորդութեանը, որով նրանք խնդրում էին հաստատել առանձին տուրք քարածուխի համար վերցնելով 8 կոպէկ ամեն—մի վագոնից, այդ տուրքը չորս տարուայ ընթացքում պիտի հասնի 100,000 րուբլու, որով և պիտի հիմնուի Եկատերինոսլաւում մի հանքային բարձրագոյն դպրոց։ Բայց, այդ եկամուտից պիտի դուրս գալ այն ծախքերը, որ պիտի տրուի քարածուխ արդիւնաբերողների մասնակցութեանը Պարիզի 1900-ի համաշխարհային ցուցահանդիսին։

—

Ասում են, որ Թիֆլիսի Վանքի միաբան արժ. Ղեոնդ աւագ քահանայ Խարազեանը, խնդրամատոյց է եղել Ներսիսեան դպրանոցի վարչութեանը և ուզում է թոշակ ստանալ յիշեալ դպրանոցում երկարամեայ պաշտօնավարութեան համար։

—

Երկու վաշխառուների՝ պետական խորհրդականի կին՝ Վերա Պոլոնսկայայի և կոլեգեալ-քարտուղար Նիկ. Գովամարաձէի գործը քննելով Թիֆլիսի նահանգական դատարանը գտաւ որ դրանք վաշխառութիւնը փէչակ գործած չատերի նեղ վիճակից օգտուելով՝ օրէնքով սահմանած տոկոսից բարձր տոկոսներ են վերցրել և պարտականներին խեղդել զանազան տանջանքներով։ Դատարանը Պոլոնսկայա Վերային և Գովարամաձէին մեղաւոր ճանաչելով, զրկեց առանձին և անձնական բոլոր իրաւունքներից ու դատապարտեց աքսորի՝ Սատրախանի նահանգը։

Տեղւոյս «Կաւկազ» թերթը այդ մասին իւր հաղորդած տեղեկութեան մէջ իւր կողմից ոչ մի նկատողութիւն չէ անում։ Իսկ մենք հաղար մի երբոր անգամ տեսնում ենք, որ վաշխառուներ ամեն տղի մէջ կան։

—

Բաղմավիրական ճանապարհը փակուած է. մեծ ձիւն է եկել։

Այդ պատճառով փետր. 14 ին և 15-ին Ռուսիայի պոստը չէ ստացուել։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

—

ԲԱԳՈՒԻՑ. — Ներկայումս քաղաքում, մթերքների անասելի թանկութիւն է տիրում։ Գները չափազանց բարձր են և անմատչելի բանուոր դասակարգին։ Մասվաճառանոցներում աշխարի միս չի կարելի գտնել, եղածն էլ ծախւում են չընտեսնուած գներով, սակագնից վեր կըրկնակի գներով, այսինքն, ոչ պակաս 17 կոպ. ֆունտը։ Սակայն մվ է ուշադրութիւն դարձնում թանգ ու ժանի վրայ, թող պա լինի 25 կոպ. հարուստի համար այդ ոչինչ. բանուոր դասակարգի, իր ձեռքի աշխատանքով մարդկանց բանն է դժուար։ Կազմուած բազմաթիւ արձանագրերն անգամ, մեր մսավաճառներին իրատ չէ լինում. դրանց համար սովորական բաներ են, միշտ այդպիսի չատ արձանագրեր տեսնել...։ Չատերը, պատճառ են բերում աշխարի սակաւութեանը

— Շատ հետաքրքիր նոր է մտաք եկել ինձ համար։ մեր գործում շատ կարևոր դեր է խաղում ամենաչնչին հանգամանքը։ Ես ինքս ականատես եղա մի դեպքի, որ ցույց տվեց ինձ, թե որքան կարևոր է ուշադրություն դարձնել ամենափոքր մանրուքների վրա։ Ես ուզում եմ ձեզ պատմել այդ դեպքը։

Ընթերցողները ևս ծանոթ են Ա. Ծատուրյանի վերջին շրջանում տպագրած հետաքրքիր հոդվածներին։ Նա ամեն անգամ, երբ մի նոր գրքույկ է հրատարակում, ուղարկում է նաև «Մշակին», որ ամեն անգամ էլ մեծ հաճույքով տպագրում է նրա գրվածքները։ Ծատուրյանի գրքույկները ամենից շատ կարդացվում են գյուղերում, որովհետև նրանք գրված են ժողովրդական լեզվով, ժողովրդական ոգով և ժողովրդի համար հասկանալի ձևով։ Ծատուրյանի գրքույկները ամենից շատ կարդացվում են գյուղերում, որովհետև նրանք գրված են ժողովրդական լեզվով, ժողովրդական ոգով և ժողովրդի համար հասկանալի ձևով։

ՀԱՅՈՑ ՅԱՅՐԱՊԵՏՈՒ ՕՐՎԱՆ ՏՈՒՆԸ

V

Ծրագիր տարեշրջան 12-ին:

Ներածական խօսք:

Ներածական խօսքի մէջ պիտի ցոյց տրուի, թէ ինչ նպատակով հրաւիրուեցաւ ազգային ժողովը, ինչ գործեր ունի ան լուծելու եւ ինչ ընթացք պիտի բռնէ իր գործունէութեան մէջ:

Ապա պիտի կարդացուի կանոնագրութիւնը ազգային ժողովոց, որ 1860 թուականին հաստատուեցաւ Կ. Պոլսոյ մէջ, եւ որ մինչեւ այսօր կը գործադրուի:

Այս կանոնագրութեան համեմատ ազգային ժողովը կը բաղկանայ 140 անդամներէ, որոնք պիտի ընտրուին Կ. Պոլսոյ եւ գաւառներու հայ ժողովուրդէն:

Կ. Պոլսոյ անդամները պիտի ընտրուին 14-ին, փետրուարի 1860-ին, ազգային ընդհանուր ժողովի մը միջոցին, որ պիտի գումարուի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Գաւառներու անդամները պիտի ընտրուին 9-ին Յունիսի 1860-ին, ազգային ընդհանուր ժողովներու միջոցին, որ պիտի գումարուին Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ընտրութեան իրաւունք ունին բոլոր այն հայերը, որոնք 25 տարեկան են, եւ որոնք ունին 500 ղուրուշ տարեկան եկամուտ:

Ընտրելի են բոլոր այն հայերը, որոնք 30 տարեկան են, եւ որոնք ունին 1000 ղուրուշ տարեկան եկամուտ:

Ընտրութեան ատեն ընտրողները պարտաւոր են ընտրել իրենց ընտրողներուն միջէն

հասաւ Père.Lachaise գերեզմանատունն առանց միջնադէպերի։ Թաղման ժամանակ ճառեր խօսեցին Փրանկ-Շոլո, Դեշանէլ, Դիւպուի, Լոկրուա, Դիլեն և այլն։

ՊԱՐԻԶ, 12 փետրուարի.—Այն բանից յետոյ, երբ զօրքերն անցան դագաղի առաջով, պատուիրակութիւնները և թափորին մասնակցողները հեռացան։ Գերեզմանատուն մտան միայն հանգուցեալի ընտանիքի անդամները, մինիստրները և բարեկամները։ Դագաղը դրուեց ընտանեկան դամբարանում։

Երբ թաղման թափորը մօտեցաւ Տուրբիգո փողոցին, ամբոխն աղաղակում էր «կեցցէ՛ Լուբէն»։ Ռէօմիւը փողոցի անկիւնում նոր կեցցէներ լսուեցին Լուբէի պատուին. մի քիչ այն կողմը լսուեցին բաւական բուռն ծափեր և ողջոյնի աղաղակներ։ Լուբէն, ի նկատի ունենալով թափօրի բնաւորութիւնը և որպէս զի նոր ողջոյնների առիթ չտայ, գլուխ չէր տալիս հասարակութեանը։ Թշնամական ոչ մի ցոյց չեղաւ։ «Կեցցէ՛ Լուբէն» աղաղակները լսում էին նոյնպէս գերեզմանատնից հեռանալիս։ Գեներալ Ցուրլինդենին ողջունում են «կեցցէ՛ զօրքը» աղաղակներով։

Լուբէն ժամը 5-ին 20 րոպէին վերադարձաւ Լիւքսեմբուրգի պալատը ամբողջ ճանապարհին ահագին ամբոխը ողջունում էր նրան։ Թշնամական ոչ մի աղաղակ չէր լսում։ Օրուայ ընթացքում դժբաղդ դէպքեր շատ պատահեցին։

Հասարակապետութեան նախագահն այսօր ունկնդրութեան ընդունեց ռուսաց դիւանագիտական պատուիրակութեանը, որն եկել էր նոցին Մեծ ուխտիւնների կողմից ներկայ լինելու Փորի թաղմանը։ Նախագահը դարձեալ այսօր ընդունեց ծովակալ Սկիբուլովին, որը, Թագաւոր Կայսրի հրամանով, եկել էր իբրև ներկայացուցիչ ռուսաց նաւատորմղի։

Երեկոյեան ժամը 6 ին բուլվարները լցուեցին թաղումից վերադարձող խուռն ամբոխով։ Բազմաթիւ ցուցարարներ «Libre Parole» լրագրի խմբագրատան առաջ աղաղակում են. «կեցցէ՛ Լուբէն», մինչդեռ խմբագրատան պատշգամբից դանազան աղաղակներ են լսում։ Խմբագրատան առաջ տուր ու դմփոց տեղի ունեցաւ։ Մի քանի հոգի ձերբակալուած են։ Ձերբակալուած է նոյնպէս պատգաւոր Միլվուան։ Մի ոստիկան սրի հարուածով վէրք ստացաւ ազգրի վրայ։

Թաղումից վերադարձող զօրագնդերից մինն անցնում էր Ազգային հրապարակով, ուր ամբոխուել էին հայրենասէրների միութեան անդամները։ Վերջիններս զօրագնդին ուղեկցեցին մինչև Նէյլի զօրանոցը, աղաղակելով «կեցցէ՛ զօրքը»։ Մի քանի ցուցարարներ բռնում են զինուորների ձեռքից և ուզում են զօրանոցը մտնել։ Բայց այնտեղ մտնել կարողացան Դերուլէդն ու Գարերը։ Ցիշեալ զօրագնդին գլուխ էր անցած գեներալ Ռոժէն։

Այսօր երեկոյեան հասարակապետութեան նախագահը, սոլորութեան համաձայն, ճաշ տուեց Փորի թաղմանը ներկայ եղող տրտակարգ պատուիրակութիւններին։

Ժամը 10-ին տեղի ունեցան հակահրէական ցոյցեր։ Աղաղակում էին «Պանամա»։ Մի քանի հոգի ձերբակալուած է։

Ժամը 11-ին 30 րոպէին Պուասոնիեր բուլվարում մի քանի տուրուդմփոց տեղի ունեցաւ։ Ոստիկանութիւնը կրեց ցուցարարներին և բազմաթիւ ձերբակալութիւններ կատարեց։ Մոնմարտրի արուարձանում մի լրագրի խմբագրատան պատշգամբից աղաղակում էին «Գորչէն ակր-ակրները»։ Այդ աղաղակները փողոցում հակակրոյց յարոյց։ Մի քանի հոգի ձերբակալուած է։

Դրուէի ոստիկանատանը յայտարարուած է, որ ձերբակալուած է 160 հոգի։ Ի միջի այլոց ձերբակալուած են գրաֆ Ք.ուազէլ և Ցալեբայն։ Գրեթէ ամենքն էլ մեղադրուում են ոստիկաններին վիրաւորելուն և քաոսների բառեր աղաղակելուն համար։ Մի քանի ցուցարարներ ոստիկանատուն են բերուած արեանլուիկ երեսով։ Երկու ոստիկան վիրաւորուած են վտանգաւոր կերպով։

Երեկոյի ընթացքում ձերբակալուած է 180 հոգի։ Անդորրութիւնը բուլվարներում վերականգնում է։ «Հաւասի գործ.»-ը հաղորդում է, որ Սենայի դեպարտամենտի պատգամաւոր Միլվուան ձերբակալուած է Մոնմարտրի բուլվարում նրա համար, որ չէր կամեցել հեռանալ, փորձ էր անում մարդիկ հաւաքել և ձգտում էր խռովել ամբոխին։ Դերուլէդ և Գարեր պատգամաւորները, մի խումբ ցուցարների գլուխ անցած, մտան Նէյլի զօրանոցը և չկամեցան հեռանալ, չնայելով զինուորական իշխանութեան վճռական պահանջներին։ Մինիստրների խորհրդի նախագահը, որին այդ մասին տեղեկութիւն էին տուել, հրամայեց պրեֆեկտին ձերբակալելու այդ պատգամաւորներին։ Միլվուան, Դերուլէդն և Գարերը տարուած են բանտային դեպոն։

ՄԱԴՐԻԴ. — Այլմենասը հրաժարուեց Լինաբէսի հետ մենամարտելուց և յայտարարեց, որ սենատում կը շարունակի իւր ագիտացիան գեներալների դէմ։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.—Մանիլիայից ստացուած հեռագրներից երևում է, որ այնտեղ անցեալ գիշեր մեծ յուզում է եղել, որովհետև զանազան տեղերում հրձիգութիւններ են կատարուած, հրշէջներին թոյլ չէին տալիս կրակը հանգցնելու, հրշէջային խողովակները կտրատել էին։ Կարգը պահպանող զօրքերի վրայ հրացէններ էին պարպում լուսամուտներից. մի քանի զինուորներ վիրաւորուած են։ Հրդեհի աւերածութիւնն ահագին է։ Առաւօտեան ֆիլիպպացիները սկսեցին անհանգստացնել ամերիկացիներին։ Բաւական զօրեղ կռիւ սկսուեց։

ՊԱՐԻԶ.—Լրագրները պատմում են, թէ Դէրուլէդը ձերբակալուած է նրա համար, որ նա հայրենասէրների միութեան 2000 անդամի ուղեկցութեամբ, հանդիպելով գեներալ Ռոժէին, որն իւր զօրքին գլուխ անցած վերադառնում էր Նէյլի զօրանոցը, սկսել էր աղերսել նրան առաջ չարժուելու դէպի Ելիսեան պալատը։ Ռոժէն վճռապէս առաջարկեց Դերուլէդին, որ հեռանայ։ Իսկ երբ վերջինս փորձեց ներս մտնել զօրանոցը գինեալը հրամայեց նրան ձերբակալել։ Դատական քննիչը գիշերը Դերուլէդին և Գարերին հարցուփորձի ենթարկեց։

Դերուլէդն և Գարերը մնում են կալանաւորուած։ Նրանց դէմ գործը կըբացուի, եթէ քննութիւնն ապացուցանի, թէ նրանք պէտք է դատուեն 1893 թ. դեկտեմբերի 12-ի օրէնքի 25-րդ յօդուածի, կամ քրէական օրէնսգրութեան 87-րդ յօդուածի հիման վրայ։ Առաջին դէպքում Դերուլեդն ու Գարերը կրյանձնուին երդուեալների դատարանի։ Դերուլեդն ու Գարերն ասում են, թէ իրենք կամենում էին փոխել կառավարութեան ձևը համազգային ձայնատուութեան միջոցով։ Այս դէպքում հեղինակաւոր կրհանդիսանայ բարձրագոյն դատաստանը։ Միլվուան ազատ կարձակուի. նրան, հաւանականաբար, կրյանձնեն ուղղել ոստիկանութեան դատարանի ոստիկանական գործակալների վիրաւորելու և հայհոյելու մեղադրանքով։ 1893 թ. դեկտ. 12-ի օրէնքի 25-րդ յօդուածն ասում է. «Ամեն մի կոչ, որ ուղղուած կըլինի զինուորական ծառայողներին նրանց իրենց պարտականութեան կատարումից չեղելու նպատակով, պատժւում է բանտարկութեամբ 1-ից մինչև 5 տարի ժամանակով և դրամական տուգանքով 100 ից մինչև 3,000 ֆր.։ Քրէական օրէնսգրութեան 87-րդ յօդուածն ասում է. «Կառավարութիւնը ոչնչացնելու կամ փոխելուն ուղղուած փորձը և քաղաքացիներին իշխանութեան դէմ զինուելու դրդումը պատժւում են բերդարգելութեամբ»։

Բուլվարներում ձերբակալուած է 200 հոգի։ Կալանաւորուած մնացին 70 հոգի։

Լուբէի նախագահութեամբ կայացած մինիստրական խորհրդում կարդացուած է Լուբէի փրէյսինէին ուղղած նամակը, որով հաս. նախագահը մինիստրին շնորհաւորում է այն բանի առթիւ, որ զօրքերը զսպուած և խիստ կանոնաւոր էին պահում իրենց Փորի թաղման ժամանակ։ Լուբէն ստորագրեց Ֆրանսիայի պաշտպանութեան սիստեմը կազմող բերդերի և ամրութիւնների ընդհանուր դասակարգութեան ծրագիրը։

ՏՈՄՍԿ. 13 փետր. Ենիսէյի նահանգապետը հեռագրում է «Տոմսկի Թերթին», որ Անդրէյի մասին լուրերը սուտ են։ Մասնաւոր նամակներից յայտնւում է, որ Անդրէյի մասին լուրերը—կոպիտ սխալմունք է։

ԼՈՆԴՈՆ։ Այսօր մեռաւ Նիցցայում բարոն Ռայտերը «Ռայտերի գործակալութեան» հիմնադիրը։

ՊԱՐԻԶ.—Դերուլէդին և Գարերին տարան այսօր «հայրենասէրների լիգայի» պատկանեալ տունը, որպէսզի այնտեղ կատարուող հետաքննութեանը ներկայ լինեն։

ՍՈՖԻԱ. «Սվաբոդա»ն հրատարակում է ստամբոլականների և Բագրատականների ծանուցումը, որ նրանք որոշել են միասին աշխատել այժմեան մինիստրութեան։ Միևնոյն ժամանակ թերթը ծանուցանում է, որ այսօրուանից թերթի հրատարակութիւնը դադարում է։

ԲԵՐՆ.—Վախճանուեց Վելտին որ վեց անգամ Զուիցերիայի դաշնակցութեան նախագահ է եղել։

ՄԱՏՐԻԴ. 14 փետր. Բիսսը հաղորդում է, որ ապստամբների Մանիլային մօտենալովը սպանիացիների դրութիւնը քաղաքում ծանրանում է։

ՊԱՐԻԶ.—Լուբէն ընդունելով ազգային հասարակապետութեան ընկերութիւնների մանաժողովին, քաջալերեց նրանց, որ այսուհետև էլ շարունակեն նրանք կրթութեան գործը հասարակապետական հոգով և աւելացրեց թէ ոչ ոք չէ կարող նրան վհատեցնել իր կոչմանը ծառայելու։

ՄԱՏՐԻԴ. — Ընտրութիւնները վերատուգելու համար կազմած սենատի մասնաժողովը լսեց Սերվերին (ծովակալ), որ պնդում էր թէ թէ ինքը քրէական դատի ենթարկուած չլինելով իրաւունք ունի մասնակցելու սենատի նիստերին։ Սերվերան յայտարարեց որ եթէ նաւատորմի խորհուրդը չանցանք ճանաչուի, այդ դէպքում պատասխանատուութիւնը կառավարութեան վրայ է. քանի որ դա ուղարկել նրան Անտիլեան ծովը իրեն՝ Սերվերայի կամքի հակառակ։ Սերվերան եղրափակեց, որ ինքը լաց է եղել երբ նրան Սանտ-Յագօ անվնաս հասնելուն համար չնորհաւորեցին, որովհետև թշուառութիւնը նախատեսել էր։

ԼՈՆԴՈՆ.—Մասկատից Բոմբէյ ստացած տեղեկութիւնից երևում է, որ տեղւոյն սուլթանը հակառակելով չէ կամեցել հաղորդել անգլիական գործակալներին Ֆրանսիայի հետ կապած պայմանագիրը։ «Էկլիպսէ» միացել է «Սֆինքս» և «Բեդբրիստ» նաւերի հետ, որ մեծ իրարանցում է առաջ բերել։ Ծովակալը հեռագրով սպառնաց սուլթանին պահանջելով որ մինչև ժամը 2-ը խորհրդին ներկայանայ, հակառակ դէպքում ժամը 2-ին 20 ր. անց կսկսէ ռմբակոծել։ Խորհրդատուները սուլթանին խորհուրդ տուին զիջանել։ Այդ միջոցին անգլիական նաւերը պատերազմի պատրաստուեցան և այդ մասին տեղեկացրին հիւպատոսութիւններին։ Ամբողջ քաղաքը տակն ու վրայ եղաւ։ Սուլթանը ծովակալի մօտ ուղարկեց իւր եղբօրը, որին ծովակալը չընդունեց։ Այն ժամանակ եկաւ սուլթանը և նաւի վրայ մնաց 3 ժամ։ Հաղորդում են, որ յետագայ օրը պալատում մեծ խորհրդին սուլթանը ծովակալին յանձնել է Ֆրանսիական պայմանագիրը, հրապարակով հրաժարուելով այդ պայմանագրի կատարումից։ Ծովակալը մեկնեց Բուչեր։

ՊԱՐԻԶ.—Ոստիկանութեան մեծաւորը սկսեց հետախուզութիւնը հայրենասէրների Լիգի տեղաւորուած տանը։ Հետախուզութիւնը երկարատև է լինելու։

Պատգամաւորների ժողովում մեծ բազմութիւն է։ Նախագահը հաղորդում է, որ թոյլատրութիւն են խնդրում դատի ենթարկելու Դերուլէդին և Գարերին։ Պահանջում են, որ խնդիրը կարպացուի։ Նախագահը կարդում է ընդհանուր պրոկուրորի նամակը, որի մէջ ասուած է, թէ պեներալ Ռոժէն տեղեկացնում է թէ մի խմբակ, որին գլուխ էին անցել Դերուլէդը և Գարերը, նրա զօրքին հետեւում էր, որի մի մասը զօրանոցի բակը մտաւ։ Դերուլէդը և Գարերը ապա հնեբին դառնալով չէրկամեցան հեռանալ զօրանոցից։ Նրանց կալանաւորելուց յետոյ նրանք յայտնում են, որ իրենք մտադրութիւն են ունեցել զօրքը ապստամբեցնելու, որպէս զի պարլամենտական հասարակապետութեան տեղը դնեն ընդհանուր ձայնատուութեան հասարակապետութիւնը։

Պատգամաւորների ժողովը ձեռքերը բարձրացնելով որոշում է Դերուլէդին և Գարերին պատասխանի ենթարկելու թոյլատրութիւնը։

ՊԱՐԻԶ.—Դերուլէդի և Գարերին տեղափոխեցին Սանդէ բանտը։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
(Սոլոլակ, Սագովայա փողոց, № 64)
(սեպհական տուն)
Հեռախօս № 330

Երեխեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2—4 ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Դիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին. առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Ձունկնդրները ձրի են։ Դիեզկոպիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մտնողները—1 ր. մինչև 5 ր մի օրուայ համար։ Երկունքի ատաղը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւներ ըստ համաձայնութեան։ Երեխեկ բոլոր հիւանդները գեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Ձունկնդրների համար 1-ական մահճակալ է դրուած իրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 Բաղուից Թիֆլիս մեկնում է օրուայ 4 ժ. 15 ր., հասնում է Թիֆլիս առ. 8 ժ 38 ր. մեկնում է Թիֆլիսից Բաթում առ. 9 ժ. 20 ր., հասնում է Բաթում երեկ. 8 ժամին 52 ր.

Փոստային գնացքը № 3 Բաղուից Թիֆլիս մեկնում է գիշ. 10 ժ. 50 ր., հասնում է Թիֆլիս կէս. 5 ժ. 9 ր. մեկնում է Թիֆլիսից Բաթում երեկ. 6 ժ. 10 ր., հասնում է Բաթում առաւ. 7 ժամին։

Մարդատար գնացքը № 2 մեկնում է Բաթումից Թիֆլիս առ. 8. ժ. 30 ր. հասնում է Թիֆլիս եր. 8 ժ. 30 ր. մեկնում է Թիֆլիսից Բաղու կէս. ժ. 15 ր., հասնում է Բաղու օրուայ ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է Բաթումից Թիֆլիս կէս. 8 ժ. 40 ր. հասնում է Թիֆլիս առ. 9 ժ. 55 ր. մեկնում է Թիֆլիսից Բաղու առ. 1 ժ. 20 ր., հասնում է Բաղու առ. 5 ժ. 42 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՓԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

երեքշաբթի, փետրուարի 16-ին տեղի կունենայ սովորական ընդհանական նիստ։ 1—

ՊԱՐՈՒԶԻ ԴԵՂԱԴԱՐԾԻ
ՍԱՆՏԱԼ ՄԻՓԻԼ
(Թոյլ է տրուած Ռուսիայում)
Այս կապսիւլների մէջ կայ զուտ սանտալի էսէնցիա։
Կեղծածներից խուսափելու համար պահանջեցէք գլուխը, որ խփուած է սև տառերով իւրաքանչիւր կապսիւլի վրայ։
ՊԱՀԵՍՏԸ ՌՈՒՍԻԱՅԻ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ.
(M.) 19972 34—34

ՀԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ
ՕՏԼՓԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
վաճառւում է 40 կոպ. բոլոր դեղատներում և դեղերի խանութներում։
(M) 142554 12—8

АЛЬДЕХИДЪ ВЛАДІО
КРЕМЪ
ДЛЯ СМЯГЧЕНІЯ
КОЖИ ЛИЦА и РУКЪ
МАЛ.ФЛАК.60к
БОЛЬШ. ФЛАК. 1 р.
ГЛАВНЫЙ СКЛАДЪ ВЪ МОСКВѢ
У В. КРЕМЕРЪ ЧИКОВС. ПОДВОРЬЕ.
МОЖНО ПОЛУЧАТЬ ВЕЗДѢ.
(M) № 167911 (9—3)

ԱՆՏԻԿԱՄ ԼԵՄԵՐՍԻԼ
Գուդը՝ կաշին անմազ դարձնելու համար
Գինը 1 ր. 25 կ. մի բանկի համար։
Գլխաւոր պահեստը՝ Ֆ. Шамбертъ, Москва, Маросейка, д. Хвощинскаго.
Վաճառւում է դեղատնային և պարֆիւմերային մագազ.
(M.) 9550 12—2

ԿՈՎԿԱՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԻՐԻԹ. ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ընկերութեան անդամներին, որ փետրուարի 21-ին, կիւրակի օրը, երեկ ժամը 7 ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում նշանակուած է կենդրոնական ընդհ. ժողով, որի զբաղմունքի առարկաները կըլինեն. 1) Զեկուցումն Յանձնաժողովի Յ. Խուդադեանի ժառանգութեան վերաբերեալ և խորհրդի դիտողութիւնները նոյն խնդրի մասին. 2) Խուդադեանի բարեսիրական հիմնութեան կամ վերանորոգութեան խնդիրը, 3) ընտրութիւններ խորհրդի հինգ անդամի, երեք փոխանդամի, գրադարանական յանձնաժողովի հինգ անդամի, վերատուչիչ յանձնաժողովի երեք անդամի և Կենդր. ընդհ. ժողովի նախագահի և քարտուղարի։ (№ 17) 4—1

Допущено цензурою. Тифлисъ, февраля 15-го дня, 1899 г. Ѳ. Ѣ. Чхеидзе Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12.—Телефонъ № 387